Mohammed Ihsan, Nation Building in Kurdistan: Memory, Genocide and Human Rights, New York, "ROUTLEDGE", 2017, 195 p.

Մոհամմեդ Իհսան, Ազգաշինությունը Քրդստանում. հիշողություն, ցեղասպանություն և մարդու իրավունքներ, Նյու Յորք, «Ռութլէջ», 2017, 195 էջ

Վերջին մի քանի տասնամյակներում Մերձավոր Արևելքում քաղաքական սրընթաց զարգացումներին նվիրված գիտական մեծածավալ ուսումնասիրություններ են հրատարակվել, որոնցում քրդական հարցը և դրան վերաբերող վերլուծությունները խիստ կարևոր են: Գրախոսվող մենագրությունը նվիրված է Իրաքի կազմում ինքնավար Քրդստանի ռեգիոնալ կառավարության (ՔՌԿ) ձևավորման, կայացման հետագա փուլերի, առանձնահատկությունների և մարտահրավերների հիմնախնդիրներին: Այն ներառում է մոտավորապես 1980-2016 թթ. Իրաքի քրդերի հարցի շուրջ զարգացումները, մասնավորապես՝ նրանց նկատմամբ Իրաքի կառավարության բռնություններն ու կոտորածները, որոնք քրդերը «ցեղասպանություն» են որակում:

Հարկ է նշել, որ գրքում ներկայացվող իրադարձությունների ժամանակակից Մ. Իհսանը այդ տարիներին բարձր պաշտոններ է զբաղեցրել[1], ուստի նյութը շարադրված է իրազեկ մարդու կողմից, գլխավորապես նրա իրականացրած դաշտային հետազոտության հիման վրա, որը համալրվել է փաստաթղթերով և քարտեզագրական տեղեկություններով:

Հեղինակը ներկայացնում է ՔՌԿ-ի ստեղծման նախահիմքերը՝ քրդական պետականաշինության հիմնական առանցք համարելով «քրդերի վերապրած ողբերգական իրողություններից հետո «քուրդ հպարտ ինքնության» կերտման» խնդիրը (էջ 23): Նա հանգամանալից անդրադառնում է ՔՌԿ-ի ստեղծմանը հաջորդած պետականաշինական բարդ գործընթացներին՝ քրդական երկու հիմնական կուսակցությունների միջև իշխանության բաժանմանը, սահմանադրության ստեղծմանն ուղղված աշխատանքներին և առանձին զինված ջոկատների՝ Միացյալ Փեշմարգայի մեջ համախմբմանը: Այդ բարդ իրողությունների քննության ընթացքում հեղինակն ուշադրությունը կենտրոնացնում է այն հանգամանքի վրա, որ չնայած ՔՌԿ-ում առկա

[1] Մոհամմեդ Իհսանը 2001-2005 թթ. եղել է ՔՌԿ-ի Մարդու իրավունքների պաշտպանության, այնուհետև՝ արտատարածաշրջանային հարաբերությունների նախարարը, 2007-2012 թթ.՝ Իրաքի դաշնային կառավարության կազմում Քրդստանի ներկայացուցիչը:

կուսակցությունների և քաղաքական ու ցեղային խմբերի միջև հակասություններին, որոնց հիմքում մեծ մասամբ ընկած են անձնական շահերը, որոշում կայացնելու գործընթացը ՔՌԿ-ում համակարգված, կենտրոնացված և կազմակերպված է եղել (էջ 30):

Մ. Իհսանը քննարկում է որոշ վիճելի տարաշաշրջանների, մասնավորապես Քիրքուքի հարցը: Այդ տարածքներում ժամանակին մեծամասնություն կազմող քուրդ ազգաբնակչությունը, սկսած 1970-ականների երկրորդ կեսից, Սադամ Հուսեյնի կողմից ենթարկվել է բռնի տեղահանության, աքսորման և արաբականացման, որի հետևանքով զգալիորեն փոխվել է շրջանի էթնիկ պատկերը (էջ 52): Ընդ որում, վիճելի տարածքների հարցի քննարկման համաշարում հեղինակը իր տեսակետը ներկայացնում է ըստ 2005 թ. ընդունված Իրաքի սահմանադրության՝ վիճելի տարածքներին վերաբերող 140-րդ կետի: Ըստ դրա՝ այդ հողերի հետագա ճակատագիրը որոշելու համար սահմանվում է գործողությունների երեք միջոցառում՝ ա) կարգավորում, որը ենթադրում է այդ շրջաններից տարհանված քուրդ բնակչության վերադարձ, բ) շրջանների ժողովրդագրական պատկերի վերհանման նպատակով մարդահամարի անցկացում, գ) հանրաքվեի իրականացում (էջ 54):

Ուշադրությունը կենտրոնացնելով Իրաքում, գլխավորապես Բաղդադում բնակվող «ֆայլի քրդեր» անվանումը կրող քրդական մի ցեղախմբի շուրջ ծավալված իրողությունների քննության վրա՝ Մ. Իհսանը նրանց նկատմամբ 1971-2003 թթ. իրականացված գործողությունները ներկայացնում է պետականորեն հովանավորված հակաքրդական լայն քարոզչության և քաղաքականության՝ ցեղասպանագիտության դրույթների համատեքստում: Այս ժամանակահատվածում աքսորված կամ անհետացած շուրջ 100 հազար քրդերի ճակատագրի քննությանը զուգահեռ՝ նա վերլուծում է նաև երկրի իրավական դաշտում՝ Քաղաքացիության մասին օրենքում, կատարված փոփոխությունները՝ հաստատելով օրենսդրության և ցեղասպանության միջև առկա կապը (էջ 70):

Բարզանի կլանին պատկանող մոտավորապես 8000 տղամարդկանց՝ 1983 թ. հուլիս-օգոստոսին Իրաքի հարավում անհետացման գործընթացը ներկայացնելու նպատակով հեղինակը, հենվելով փաստաթղթային սակավաթիվ տվյալների և վկայությունների վրա, որպես Բարզանիների սպանության վայր ներկայացնում է Բաղդադի մոտակայքում գտնվող Բուսայա բնակավայրը (էջ 87), իսկ Բարզանիների թիրախավորումը բացատրում է քրդական ազգային շարժման մեջ նրա ամուր դիրքերով, ինչպես նաև իշխանությունների նկատմամբ ոչ չեզոք դիրքորոշմամբ:

Մ. Իհսանը մանրամասն ներկայացնում է նաև իրաքյան իշխանությունների՝ Իրան-իրաքյան պատերազմի ավարտին՝ 1988 թ. փետրվար-սեպտեմբերին իրականացրած «Անֆալ» անվանումը կրող գործողությունը և տարանջատում դրա ութ փուլ (էջ 106-121): Փաստական նյութի հիման վրա նա ուրվագծում է իրականացված գործողությունների ընթացքը, դրանց գաղափա-

րական ու քարոզչական հենքը և զինված ուժերի ստորաբաժանումների ներգրավվածության ծավալները: Այս գործողությանն առնչվող դատաքննական գործընթացին անմիջականորեն մասնակցելու հնարավորության ունեցած հեղինակը բացառիկ տվյալներ է հաղորդում դրա տարածքային ծավալումների և քուրդ բնակչությանը հասցված վնասի վերաբերյալ:

Հարկ է նշել, որ քիմիական զենքի կիրառմամբ այս հանցագործությունը հեղինակն անվանում է «ցեղասպանություն» և «պետականորեն իրագործված ծրագիր», որը հիմնավորում է երկու հիմնական փաստարկներով. ա) անմիջական ռազմական գործողություններին նախորդել ու հաջորդել են քարոզչական լայնածավալ աշխատանքները, որոնց նպատակը երկրի բնակչության շրջանում քրդերի նկատմամբ բացասական վերաբերմունք և կարծիք ձևավորելն էր, բ) այդ գործողություններում ակտիվորեն ներգրավված են եղել պետական մի շարք կառույցներ (էջ 123):

Ուշագրավ է նշված գործողությունների հետևանքով Իրաքի քրդաբնակ շրջանների պատկերը ներկայացնող՝ Մ. Իհսանի կազմած հեղինակային աղյուսակը, որը պարունակում է իր իսկ իրականացրած հետաքննության տվյալները: Գործողության հետևանքով ընդհանուր առմամբ սպանվել է 182 հազար քուրդ, իսկ հազարավոր քրդեր ապաստան են գտել Իրանի Իսլամական և Թուրքիայի հանրապետություններում, ավերվել են 2027 գյուղեր:

Թվային և վիճակագրական պատկերը լրացնելով «Անֆալ»-ի առանձին փուլերի տվյալներով՝ հեղինակը հերքում է այն տեսակետը, թե գործողությունները Իրան-իրաքյան պատերազմի մասն են կազմել և ուղղված են եղել իրանական բանակի դեմ: Նա այդ ամենի վերջնանպատակ է համարում քուրդ ազգաբնակչության ցեղասպանությունը:

Վերջին գլուխը նախորդներում ուսումնասիրված հարցերի որոշակի ամփոփումն է, որում քննարկվում են Սադամ Հուսեյնի կառավարության իրականացրած քաղաքականության հետևանքով երկրին հասցված վնասների ծավալները և այդ պայմաններում քրդական պետականաշինության առջև դրված պլաններն ու պահանջները: Մ. Իհսանը ՔՌԿ-ի ապագայի վերաբերյալ քրդերի տեսլականը ներկայացնում է ինքորոշման իրավունքի կիրարկմամբ ստեղծվելիք «աշխարհիկ դեմոկրատական պետության» ծրագրի շրջանակներում (էջ 152): Հարկ է նշել մի կարևոր հանգամանք ևս. հեղինակը միանշանակորեն հաստատում է, որ ՔՌԿ-ի հետագա ճակատագրի վերաբերյալ անցյալում քրդերի շրջանում մեծ հետևորդներ ունեցող «ֆեդերալիզմի գաղափարը» ներկայումս արդեն դարձել է անհնար:

Ամփոփելով կարող ենք նշել, որ սույն աշխատությունը Մերձավոր Արևելքի քաղաքական, տնտեսական, կրոնական և սոցիալական արդի զարգացումների և գործընթացների, ՔՌԿ-ի ներքաղաքական իրավիճակի, ծրագրերի ամփոփ քննությունն է, ինչը, շնորհիվ իր պատմական և աղբյուրագիտական հենքի ու արժեքի, հնարավորություն է ընձեռում ըմբռնել տարածաշրջանային զարգացումների վերաբերյալ քրդական դիսկուրսը և միտում-

ները: Ցավոք հարկ է նշել, որ ՔՌԿ-ում տեղի ունեցած զարգացումները վերլուծելիս և ստեղծված իրավիճակը գնահատելիս հեղինակը նվազ ուշադրության է արժանացնում այդ զարգացումներում Մերձավոր Արևելքի տարածաշրջանի և արտատարածաշրջանային պետությունների դերին և ընդհանրապես ՔՌԿ-ի նկատմամբ նրանց մոտեցումներին:

ԱՆԳԵԼԻՆԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ